

ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ Եկեղեցին ունի 9 ժամերգություն:

Հայ Եկեղեցում գիշերային ժամերգությունը համարվում է առաջինը: Ժամերգությունները հետեւյալն են.

Գիշերային ժամերգություն - նվիրված է Հայր Աստծու փառաբանությանը: Ժամերգությունը կատարվում է կեսգիշերին: Քունն Աստծու կողմից շնորհված բարիք է, եւ մենք մեր երախտագիտություն ենք հայտնում առ Աստված այդ շնորհի համար ու խնդրում, որ գիշերվա շարունակությունն անց կացնենք խաղաղ ու հանդարտ, իսկ հաջորդ օրը՝ անցնի առանց մեղքի ու փորձության:

Առավոտյան ժամերգություն - նվիրված է Որդի Աստծու փառաբանությանը: Ժամերգությունը կատարվում է արշալույսին: Այն հիշատակում է Քրիստոսի հայտնությունը Յուդաբեր կանանց եւ մեզ հիշեցնում է Քրիստոսի Հարության ու Փրկչական առաքելության մասին:

Արեւագալի ժամերգություն - նվիրված է Սուրբ Հոգուն: Նախկինում այն առավոտյան ժամերգության մի մասն էր կազմում: Այն խորհրդանշում է Քրիստոսի հարությունը եւ նրա երեւալը աշակերտներին: Ժամերգությունը կատարվում է արեւագալին եւ նույնացվում է Քրիստոսի հարության հետ: Այս ժամերգությունը հաստատել է Եզր I (630-641թթ) Կաթողիկոսը, իսկ XII դարում այն հարստացվել է սուրբ Ներսես Շնորհալու (1173թ) շարականներով:

Ճաշու Գ ժամի ժամերգություն - կատարվում է ժամը 9.00-ին: Այն նվիրված է Սուրբ Հոգու իջմանը եւ խորհրդանշում է Եվայի կողմից արգելված պտղի ճաշակելը ու Քրիստոսի միջոցով ազատվելը: Գ ժամի ժամերգությունը ապաշխարության խոր իմաստ է բովանդակում:

Ճաշու Զ ժամի ժամերգություն - կատարվում է ժամը 12.00-ին: Այն նվիրված է Հայր Աստծուն եւ խորհրդանշում է Քրիստոսի չարչարանքներն ու խաչելությունը: Այս ժամերգության ընթացքում մենք

Աստծուց օգնություն ենք խնդրում մարդկային մեր տկար բնության համար:

Ճաշու Թ ժամի ժամերգություն - կատարվում է ժամը 15.00-ին: Այն նվիրված է Որդի Աստծուն եւ խորհրդանշում է Քրիստոսի մահն ու մարդկության ազատվելը մահվան իշխանությունից:

Երեկոյան ժամերգություն - նվիրվում է Որդի Աստծուն եւ խորհրդանշում է Քրիստոսի խաչից իջեցումը եւ թաղումը: Այն մատուցվում է մայրամուտից առաջ: Գիշերվա շեմին քրիստոնյան, անցած օրվա իր աշխատանքից եւ մտավոր լարվածությունից հոգնած, Աստծուց խնդրում է հանգիստ գիշեր ու խաղաղ քուն:

Խաղաղական ժամերգություն - նվիրվում է Սուրբ Հոգուն եւ խորհրդանշում է Քրիստոսի դժոխք իջնելը եւ արդար հոգիների ազատագրումը տանջանքներից: Ժամերգությունը կատարվում է մայրամուտից հետո:

Հանգստյան ժամերգությունը նվիրված է Հայր Աստծուն: Հնում այն խաղաղական ժամերգության շարունակությունն էր: Ժամերգության ընթացքում հայցում ենք, որ Հայր Աստված Միաձնի պահապան Աջով պահի մեզ խաղաղության մեջ խավարային գիշերվա ընթացքում: Ժամերգությունը կատարվում է քնից առաջ:

Հնում բոլոր **9 ժամերգությունները մատուցվում էին ամեն օր**, հատկապես վանքերում: Ներկայումս եկեղեցիներում ամեն օր կատարվում են հետեւյալ ժամերգությունները.

Առավոտյան- Միասին կատարվում են գիշերային եւ առավոտյան ժամերգությունները

Երեկոյան- կատարվում է երեկոյան ժամերգությունը

Մյուս բոլոր ժամերգությունները կատարվում են Մեծ Պահքի ժամանակ՝ շաբաթվա յուրաքանչյուր օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, հետեւյալ կարգով.

Առավոտյան - գիշերային, առավոտյան եւ արեւագալի
ժամերգությունները

Կեսօրին - Ճաշի Գ, Ջ եւ Թ ժամերգությունները

Երեկոյան - երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի -

Խաղաղական ժամերգություն

չորեքշաբթի, ուրբաթ - հանգստյան ժամերգություն

շաբաթ, կիրակի - երեկոյան ժամերգություն